

**Քննչական բաժնի պետի կարգավիճակը  
քրեադատավարական օրենսդրության  
բարեփոխումների գործընթացում**

Ա. Դամբարյան  
ՀՀ գլխավոր դատախազության վարչության  
դատախազ, իրավաբանական  
գիտությունների թեկնածու, դոցենտ

Շ. Իսրայելյան  
Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի  
քրեական իրավունքի և դատավարության ամբիոնի հայցորդ

Քրեական դատավարության տեսության մեջ մշտապես քննարկման առարկա է հանդիսացել քրեական դատավարությունում քննչական բաժնի պետի կարգավիճակի, գործառույթների և լիազորությունների հետ կապված հարցերը: Գործող քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետում քննչական բաժնի պետը չի հիշատակվում որպես քրեական դատավարության մասնակից, իսկ քննչական բաժնի պետի լիազորությունները նախատեսված են քր. դատ. օր-ի ոչ թե 7-րդ (մեղադրանքի կողմ), այլ 26-րդ գլխում ( նախնական քննություն):

ՀՀ-ում իրականացվում է քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումների գործընթաց, այդ նպատակով սույն հոդվածում կքննարկենք, թե արդյոք քննչական բաժնի պետը համարվում է քրեական դատավարության սուբյեկտ, եթե այո, ապա նա ինչպիսի՞ գործառույթներ է իրականացնում և ինչպիսի՞ պատասխանատվություն է կրում քրեական գործերի քննության համար:

Տեսության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ անձը համարվում է քրեական դատավարության սուբյեկտ, եթե նախատեսված է քրեադատավարական օրենքով, իրականացնում է դատավարական կոնկրետ գործառույթ և այդ գործառույթն իրականացնելու նպատակով օժտված է դատավարական իրավունքներով և պարտականություններով<sup>1</sup>: Դատավարության սուբյեկտ լինելու համար անհրաժեշտ է թվարկված երեք հատկանիշների միաժամանակյա առկայությունը: Այս առումով կանխավ նշենք, որ այն հանգամանքը, որ քննչական բաժնի պետը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, դեռևս չի նշանակում, որ նա հանդիսանում է քրեական դատավարության սուբյեկտ: Այս առումով քննադատության է արժանի այն գիտնականների տեսակետը, ովքեր քննչական բաժնի պետին քրեական դատավարության սուբյեկտ են համարում միայն ելնելով այն հանգամանքից, որ նրա լիազորությունները կարգավորվում են քրեական դատավարության օրենսգրքով: Իսկ Օ. Ո. Խիմիչևան դրան ավելացնում է նաև այն հիմնավորումը, որ քննչական բաժնի պետի

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, դասագիրք, Երևան -2002, էջ 199:

վերահսկողությունը դուրս է գալիս կոնկրետ գերատեսչության առջև կանգնած խնդիրների շրջանակից և ծառայում է քրեական դատավարության խնդիրների իրականացմանը<sup>2</sup>:

Արդյոք քննչական բաժնի պետը իրականացնում է դատավարական գործառույթ, օժտված է դատավարական իրավունքներով և պարտականություններով: Այս նպատակով նախ ներկայացնենք գործող քր. դատ. օր-ի կարգավորումը, այնուհետև վերլուծենք ՀՀ քր. դատ. օր-ի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) արտացոլված մոտեցումը:

Գործող քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի համաձայն՝ քննչական բաժնի պետը՝

1. նախաքննության կատարումը հանձնարարում է քննիչին, գործը մի քննիչից հանձնում է մյուսին, 2. հետևում է քննիչների կողմից իրենց վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելու, նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները պահպանելու, դատախազի ցուցումները և այլ քննիչների հանձնարարությունները կատարելու նկատմամբ, 3. ցուցումներ է տալիս առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ, 4. նախաքննության կատարումը հանձնարարում է մի քանի քննիչի:

Կարծում ենք քննչական բաժնի պետի վերը թվարկված լիազորությունները, բացառությամբ 3-րդ կետի, իրենց բնույթով կազմակերպական, մեթոդական և վերահսկողական բնույթի են և ուղղված են քննության կազմակերպմանը:

Նախագծում ամրագրված են քննչական բաժնի պետի հետևյալ լիազորությունները՝

- 1) ապահովում է քրեական վարույթի ժամանակին իրականացումը,
- 2) կազմակերպում է իր ենթակայության տակ գործող քննիչների աշխատանքը,
- 3) նախաքննության կատարումը հանձնարարում է քննիչին կամ մի քանի քննիչի, գործը մի քննիչից հանձնում է մյուսին, ստեղծում է քննչական խումբ,
- 4) հետևում է քննիչների կողմից իրենց վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելու, նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները պահպանելու, դատախազի ցուցումները և այլ քննիչների հանձնարարությունները կատարելու նկատմամբ: Ինչպես նկատում ենք, Նախագծում արտացոլվել է տեսության մեջ ընդունված այն մոտեցումը, որ քննչական բաժնի պետը կարող է իրականացնել միայն մեթոդական, կազմակերպական և վերահսկողական լիազորություններ, ինչը համապատասխանում է գերատեսչական վերահսկողությանը<sup>3</sup>:

<sup>2</sup>Хумичева О. В., Концептуальные основы процессуального контроля и надзора на досудебных стадиях уголовного судопроизводства. М., Ст. 100:

<sup>3</sup>Соловьев А. Б. Актуальные проблемы прокурорского надзора за законностью предварительного расследования. Судебная реформа и проблемы уголовного судопроизводства. М. 1995, Ст. 106: Татоян А. Расследование дела в системе уголовно-процессуальных функции. ЕГУ. 2007. Ст. 177:

Քննչական բաժնի պետը գերատեսչական վերահսկողության շրջանակներում նախ և առաջ պետք է հետևի քննիչի կողմից իր պարտականությունները, ինչպես նաև դատախազի ցուցումները ժամանակին և որակով կատարելուն: Ավելին, առանձին դատավարագետներ արդարացիորեն նշում են, որ պետք է բացառվի քննչական բաժնի պետի կողմից դատավարական ղեկավարման իրականացումը<sup>4</sup>: Պետք է արձանագրել, որ նշված մոտեցումը լիովին արտացոլված է Նախագծում. քննչական բաժնի պետին վերապահված է բացառապես կազմակերպական բնույթի լիազորություններ:

Միևնույն ժամանակ տեսության մեջ առկա է հակառակ մոտեցումը, որով փորձ է արվում հիմնավորել քննչական բաժնի պետի կողմից քննության նկատմամբ դատավարական ղեկավարման ֆունկցիայի գոյության անհրաժեշտությունը<sup>5</sup>: Ավելին, առանձին դատավարագետներ քննչական բաժնի պետին դիտում են որպես քննիչի կողմից քրեադատավարական օրենքի խախտումը կանխող առաջին ձեռք<sup>6</sup>:

Ի տարբերություն գործող քր. դատ. օր-ի, Նախագծով քննչական բաժնի պետը օժտված չէ քննչական գործողություններ կատարելու ցուցումներ տալու դատավարական լիազորությամբ: Բանն այն է, որ քննչական բաժնի պետի կողմից առանձին քննչական գործողություն կատարելու վերաբերյալ քննիչին ցուցումներ տալու լիազորություն ունի դատավարական բնույթ, որը բխում է դատախազի կողմից հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացման սահմանադրական լիազորությունից:

Բացի այդ, քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ ցուցումներ տալու հիմնական նպատակը քննության բազմակողմանիության, լրիվության, օբյեկտիվության և արդյունավետության ապահովումն է: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հետաքննության եւ նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության եւ արդյունավետության համար պատասխանատու է հսկողություն իրականացնող դատախազը: Եթե գործի լրիվության, օբյեկտիվության եւ բազմակողմանիության համար պատասխանատու է դատախազը, ուստի հենց նա պետք է օժտված լինի ցուցում տալու լիազորությամբ:

Այսպիսով, նախագծում քննչական բաժնի պետը օժտված չէ դատավարական լիազորություններով, չի իրականացնում դատավարական գործառույթ: Քննչական բաժնի

<sup>4</sup> Գլազինյան Գ. Ս Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները: Երևան, ԵՊՀ հրատ., էջ 240

<sup>5</sup> Տե՛ս Селезнев М. Ведомственный-процессуальный контроль и прокурорский надзор на предварительном следствии. Законность. 1999, № 1, Ст. 16; Хан А. Л., Система и процессуальный статус органов, осуществляющих досудебную деятельность. Автореферат дис. ... канд. Юр. Наук. Караганда, 2002, Ст. 25-26. Бакрадзе А. Прокурорский надзор и ведомственный контроль за расследованием преступлений органами МВД. Социалистическая законность. 1970 № 3, Ст. 39-41.

<sup>6</sup> Хумичева О. В., Концептуальные основы процессуального контроля и надзора на досудебных стадиях уголовного судопроизводства. М., Ст. 99.

պետի կողմից բացառապես կազմակերպական լիազորություններ իրականացնելու վերաբերյալ սկզբունքային մոտեցման տրամաբանությունը ենթադրում է, որ քննչական բաժնի պետի լիազորությունները պետք է կարգավորվեն ոչ թե քր. դատ. օր-վ, այլ քննչական բաժիններ ունեցող համապատասխան գերատեսությունների իրավական հիմքերը սահմանող օրենքներով՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, Հարկային և մաքսային ծառայության մասին ՀՀ օրենքներով և այլն:

Ինչպես գործող օրենքում, այնպես էլ Նախագծում նախատեսված է քննչական բաժնի պետի՝ գործը մի քննիչից մյուսին հանձնելու լիազորությանը: Քննիչին փոխելու՝ քննչական բաժնի պետի անսահմանափակ հայեցողությունը սահմանափակում է քննիչի դատավարական ինքնուրույնությունը: Պրակտիկայում, քննչական բաժնի պետը, օգտվելով նշված լիազորությունը սահմանափակող անհրաժեշտ իրավական շրջանակների բացակայությունից, կարող է առանց պատճառաբանության գործը մի քննիչից հանձնել մյուսին, այն դեպքում, երբ առաջինը կարող է կատարած լինի գործի քննությունը, բացահայտած լինել հանցագործությունը, իսկ երկրորդին կմնա միայն վերջնական որոշման կայացումը, դրանով իսկ ձեռք կբերի աշխատանքային գործունեության հետ կապված ոչ իրական ցուցանիշ: Քննիչի ինքնուրույնությունն ապահովելու նկատառումով քննչական բաժնի պետի կողմից գործը մի քննիչից մյուսին հանձնելը օբյեկտիվորեն պետք է ունենա քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սպառիչ հիմքեր: Մասնավորապես, կարելի էր նախատեսել քննչական բաժնի պետի կողմից գործը մի քննիչից մյուսին հանձնելու հետևյալ հիմքերը.

1. դատախազի կողմից քննիչին վարույթից հեռացնելը,
2. քննիչի նկատմամբ հայտնված բացարկը կամ ինքնաբացարկը դատախազի կողմից բավարարելը,
3. քննիչի՝ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելը,
4. քննիչի՝ պաշտոնից ազատումը կամ այլ պաշտոնի նշանակումը,
5. այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում քննիչի կողմից իր լիազորությունների իրականացումը:

Յուրաքանչյուր դեպքում քննչական բաժնի պետը պարտավոր է պատճառաբանել քննիչին փոխելու իր որոշումը:

Նախագծում քննչական բաժնի պետի լիազորությունները թվարկելիս օգտագործվում է «իր ենթակայության տակ գործող քննիչներ» ձևակերպումը: Կարծում ենք ենթակայություն եզրույթը չի համապատասխանում քննչական բաժնի պետ - քննիչ փոխհարաբերությունների բնույթին: Ենթակայությունը բնորոշ է վարչական իրավահարաբերությունների: Եթե նույնիսկ քննչական բաժնի պետը և քննիչը դատավարական հարաբերություններից դուրս կարող են գտնվել վարչաիրավական

ենթակայության ներքո, ապա օրենսդրական համապատասխան ակտերով պետք է հստակ սահմանվի վերադաս և ենթակա սուբյեկտների շրջանակը: Օրինակ՝ պետք է հստակեցնել՝ Երևան քաղաքի քննչական վարչության պետը արդյոք վերադաս է համայնքի քննիչի նկատմամբ, թե ոչ:

Այսպիսով, առաջարկում ենք.

1. Ելնելով այն հանգամանքից, որ քննչական բաժնի պետն օժտված չէ որևէ քրեադատավարական գործառույթով, ուստի նրա լիազորությունները չեն կարող կարգավորվել դատավարական օրենսդրությամբ: Հետևաբար անհրաժեշտ է Նախագծից հանել քննչական բաժնի պետի լիազորությունները սահմանող դրույթը:

2. Օրենսդրությամբ սահմանել քննչական բաժնի պետի կողմից քննիչին փոխելու իրավական հիմքերը:

3. Նախագծից հանել «քննչական բաժնի պետի ենթակա քննիչ» հասկացությունը: